ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

(Ծննդյան 80-ամյակի առթիվ)

Բոլորեց հայ մեծանուն գիտնական, հասարակական ու քաղաքական գործիչ, ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի ծննդյան ութսուն տարին։ Ավելի քան վաթսուն տարի է, որ նա անխոնջ գործում է մեր հասարակական և մշակութային կյանքի անդաստանում, նվիրաբերելով իր գիտելիքների և էներգիայի անբսպառ պաշարը իրեն ծնունդ տված ժողովրդին։ Տարիների բազմությունը չի թուլացրել նրա եռանդը, չի բթացրել գրիչը, չի կրել նրա ուսերը, թեև նրա կյանքի տարիները համընկել են աշխարհացունց իրադարձությունների, մեր ժողովրդի կյանքի բախտորոշ երևույթների հետ, իսկ նա հեռվից ձեռնածալ չի դիտել այդ ամենը, այլ միշտ գտնվել է դեպքերի հորձանուտում, պայքարի առաջավոր բնաղծում։



Աշոտ Հովհաննիսյանը ծնվել է 1887 թ. հունիսի 17-ին Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքում։ Թերևս Ղարաբաղի, հայ ազատագրական շարժումների այդ երբեմնի բնօրրանի լեռնային ըմբոստ բնությունը, որի գրկում անցան ապագա գիտնականի և քաղաքական գործչի մանկությունն ու պատանեկությունը, կանխորոշեց նրա նախասիրությունները, այն է՝ հայ ժողովրդի ազատագրական շարժումը և պայքարը հանուն մարդկության և մայր ժողովրդի ազատագրության՝ սոցիալական շահագործման ճիրաններից։ Ավարտելով Շուշիի ռեալական դպրոցը, 1906 թ. ուսումնածարավ երիտասարդը մեկնում է Գերմանիա, ուր իրեն նվիրում է պատմության ու փիլիսոփայության ուսումնասիրությանը։ Ուսումնառության տարիների արգասիքը հանդիսացավ 1913 թ. գերմաներեն լեզվով Սյունիքենում լույս տեսած նրա «Բսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը» դոկտորական դիսերտացիան, որը ոչ միայն նշանավորեց հայ մարքսիստական պատմագրության հիմնադիրներից մեկի մուտքը գիտության ասպարեզ, այլև գիտական հարցերի այն հիմնական առանցքը, որով ընթանալու էր Աշոտ Հովհաննիսյանի ստեղծագործական կյանքի հիմնական ուղին։

Վերադառնալով հայրենիք, նա մեկ տարի դասավանդում է Շուշիի հոգևոր սեմինարիայում, որից հետո ուսուցչական գործունեության է անցնում ժամանակի մեր լավագույն ուսումնական հաստատություններից մեկում՝ Գևորգյան ճեմարանում։ Այստեղ նա ավանդում է ընդհանուր պատմություն, քաղաքա-

տնտեսություն, գերմաներեն և լատիներեն։ Դեռևս 1906 թ. նա ընդունվել է Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության շարքերը։ Որպես ՌՍԴԲԿ-ի անդամ, նա ընդհատակյա հեղափոխական աշխատանք է տանում ճեմարանի ուսանողության շարքերում, նախապատրաստում նրանցից շատերին ապագա քաղաքական գոտեմարտերի համար։

1917 թ. ողջ Ռուսաստանով մեկ բռնկեց հեղափոխական պայքարի բոցը։ Հեղափոխության առաջին տարիներին մենք նրան տեսնում ենք Բաքվում, ուր գործուն մասնակցություն է բերում փառապանծ կոմունային։ Հակահեղափոխության ժամանակավոր հաղթանակից հետո նրան հաջողվում է անցնել Մոսկվա, որտեղ կրկին եռանդուն գործունեություն է ծավալում ժողովրդական լուսավորության և ազգությունների գործերի կոմիսարիատներում, դասախոսում է Լաղարյան ճեմարանում, գործում դիվանագիտության ասպարեզում։ Մեծ է Աշոտ Հովհաննիսյանի ծառայությունը Հայաստանում սովետական կարգեր հաստատելու գործում։

Հայաստանի ազատագրումից հետո Աշոտ Հովհաննիսյանը վարել է մի շարք ղեկավար պաշտոններ։ Նա եղել է լուսավորության ժողովրդական կոմիսար, 1921—1927 թթ. Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի գլխավոր քարտուղար։ 1928 թ. նա տեղափոխվում է Մոսկվա, որտեղ աշխատում է Մարքսի-Էնգելսի ինստիտուտում, ապա Նյութական կուլտուրայի պատմության պետական ակադեմիայի Մոսկվայի բաժանմունքում որպես դիրեկտոր, ՍՍՀՄ ազգությունների ինստիտուտում որպես պրոֆեսոր։ Բոլոր այդ տարիներին, չնայած հասարակական-քաղաքական աշխատանքներով ծանրաբեռնված լինելուն, նա մնացել է գրչի անխոնջ մշակ, ստեղծել է գործեր, որոնք պատվավոր տեղ են գրավում վաստակավոր գիտնականի գրական ժառանգության մեջ։

1954 թ. նա կրկին Երևանում է, ուր ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում շարունակում է իր բեղմնավոր գործունեությունը։ Դրա արդյունքը հանդիսացավ 1960 թ. նրա ընտրվելը Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, որպես ընդունումն նրա անժխտելի վաստակի՝ հայրենի պատմագրության մեջ։ Նա այժմ գլխավորում է պատմության ինստիտուտի հայ ժողովրդի նոր պատմության սեկտորը, դաստիարակում երիտասարդ գիտնականների մի ամբողջ սերունդ, օժանդակում նրանց գիտական աճին, բաժանում նրանց հետ իր խոհերն ու մտքերը, կոփում նրանց մեջ ապագա պատմաբանին և շարունակում է ստեղծագործել։

Զափազանց ընդգրկուն է Աշոտ Հովհաննիսյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը, բազմաթիվ են նրան հրապուրող հարցերը, որոնց նվիրել է 70-ից ավելի ուսումնասիրություններ։ Հայ ժողովրդի պատմության վաղ միջնադարից մինչև մեր օրերը հասնող ժամանակաշրջանի բազմաթիվ առանցքային հարցեր են իրենց վրա գրավել նրա սեռեռուն ուշադրությունը։ Բայց այդ ամենի մեջ վեր են խոյացել հայ ազատագրական մտքի և ազատագրական շարժումների պատմությանը նվիրված հետազոտությունները՝ վերաբերվելիս լինեն դրանք միջնադարին, թե նոր ժամանակաշրջանին։ Եվ դա պատահական չէ, որովհետև մեր ժողովրդի պատմական ճակատագրի մեջ անժխտելիորեն տիրապետող դիրք է գրավել օտարերկրյա լծից ազատագրվելու, սեփական պետականությունը վերականգնելու անզուսպ տենչանքը, որին նա պետք է հասներ դա-

բավոր պայքարի գոտեմարտներում, հասնելով միաժամանակ և իր սոցիալական ազատագրմանը։

Ձեռնամուխ լինելով այդ շնորհակալ գործին, Աշոտ Հովհաննիսյանը տարիների քրտնաջան աշխատանք է կատարում՝ ուսումնասիրում է հնագիտության ձեռագիր մատյանները, արխիվային դարակներում պահպանվող վավերագրերը, բազմաթիվ լեզուներով հրապարակված գրականությունը և մեկը մյուսի հետևից սեղանի վրա դնում իր ժողովրդի դարավոր ազատագրական պայքարը լուսաբանող մեծարժեք ուսումնասիրություններ. «Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը» (Սյունիքն, 1913 թ.), «Հայ-ռուս օրիենտացիայի հարցի շուրջ» (Էջմիածին, 1921 թ.), «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» երկհատորը (Երևան, 1957—59 թթ.), «Հայ-ռուսական հարաբերությունները 18-րդ դարի առաջին երեսնամյակում» փաստաթղթերի ժողովածուն վերլուծող պատմական ընդարձակ ներածությունը (Երևան, 1964 թ.) և բազմաթիվ հոդվածներ։

Այդ աշխատություններում բազմավաստակ պատմաբանը գիտնականի անկաշառ բարեխղճությամբ նշում է այն զարտուղի արահետները, որով ընթացել է հայ ազատագրական միտքը, վերլուծում պատմական զարգացման բարդ հանգույցներում խճճված հայ ժողովրդի ազատագրական ոգորումները, նախքան նա իր հայացքը կհառներ դեպի Ռուսաստան, նոր շունչ կհաղորդեր իր մտորումների ծնունդ հանդիսացող ազատագրական լեգենդին, կգտներ այն միակ ուղին, որը ընդունակ կլիներ նրան տանել դեպի «ավետյաց երկիրը», այսինքն դեպի իրական ազատագրություն։

Աշոտ Հովհաննիսյանի գիտական ստեղծագործության մեջ առանձնակի տեղ են գրավում հայ հեղափոխական-դեմոկրատական ուղղության ռահվիրա Միքայել Նալբանդյանի կյանքի և գործունեության ուսումնասիրությանը նվիրված հետազոտությունները։ 1935 թ. Մոսկվայում Միքայել Նալբանդյանի «Անտիպ երկերի» հրատարակությամբ նա ձեռնամուխ եղավ հայ իրականության այդ եղակի գործիչներից մեկի փոթորկաշունչ կյանքի ու գործունեության վերլուծմանը, որը ավարտվեց 1955—56 թթ. երկու հատորից կազմված մոնումենտալ աշխատության հրատարակությամբ։ Այստեղ նա լուծեց բազմապիսի բարդ հարցեր, որոնք վճռական նշանակություն ունեն հայ ժողովրդի պատմական հետագա զարգացման առաջընթացը ըմբռնելու տեսանկյունից, ցույց տվեց այն ուղին, որով հայ ժողովրդի պայքարը, դուրս գալով ազգային համեմատաբար նեղ շրջանակից, պետք է լծորդվեր համամարդկային իդեալներին։

Լինելով նաև պայքարի մարդ, Աշոտ Հովհաննիսյանը չէր կարող խուսափել ժամանակի դարկերակում արոփող հարցերի բննությունից։ Հեղափոխության առաջին տարիներին նա պայքարի դրոշ է բարձրացնում մեր գաղափարական հակառակորդների դեմ, ցույց է տալիս նրանց քաղաքական սնանկությունը, ինչպես և այն ճշմարիտ իդեալը, հանուն որի պետք է մարտնչել։

Ստեղծագործական անխոնջ գործունեություն եղել և մնում է Աշոտ Հովհաննիսյանի գործունեության ալֆան և օմեգան։ Եվ հիմա էլ, երբ նրա կյանքը թեակոխում է իններորդ տասնամյակը և չնայած բազմաթիվ պարտականություններով ծանրաբեռնված լինելուն, նա շարունակում է ունդուլ եռանդով ստեղծագործել։ Այժմ էլ, ինչպես և տարիներ առաջ, նա ապշեցնում է իր անօրինակ աշխատասիրությամբ, մտքի թարմությամբ և հիասքանչ հիշողությամբ, որոնք ստեղծագործական գործունեության նախապայմանն են։ Նոր

պատմության սեկտորի աշխատանքները ղեկավարելուն համատեղ նա հանդիսանում է նաև «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատոր աշխատության գլխավոր խմբագիրը, պատրաստում է մի շարք ասպիրանտներ, գործուն մասնակցություն ունենում բազմաթիվ աշխատությունների քննարկմանը, խմբագրում է դրանք և պատրաստում հրատարակության, միաժամանակ ստեղծելով նորանոր պատմական երկեր։

Աշոտ Հովհաննիսյանի կյանքը գիտությանը նվիրաբերելու փայլուն օրինակ է, որը պետք է ոգեշնչի մեր երիտասարդ գիտնականներին։

Ի սրտե ցանկանում ենք նրան երկար տարիների առողջ կյանք և ստեղծագործական նոր հաջողություններ։